ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 02 >> Նոյեմբեր 2012թ. N 83

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N464-Ա որոշումը, <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ժ. Բաղդասարյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ն. Պետրոսյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ժ. Բաղդասարյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությանը /Վ. Մկրտչյան/ սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2012 թվականի հունվարի <<02>>-ի

N 83 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ժ. Բաղդասարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

Անդամներ՝

Հ. Ասոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ:

Ս. Ղուկասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Ն.Զաքարյան- <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն տնօրենի նախկին պաշտոնակատար:

Ընդունող՝

Ն. Հովսեփյան <<Այգեշատ միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն տնօրենի պաշտոնակատար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ